


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
Ե. ՓՈՐՓՈՍԵԱՆ

Նամակ կամ որ եւ է
զրուած ինչպէս որ եղիւ առ
Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ Կրպորի
ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏ ՈՍԻ ԶԱՍՏԱՐ	
Տարեկան ողջ դասիկն	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐԻՆԵՐ	
Տարեկան Ծրակի	20
Վեցամսեայ	12

E. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHALOUYOE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՄ.Թ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Եւ թղթատարի ծախքը
Խնայարարեանս վրայ է :

Խնայարարեանս ուղղուած
գրութիւնք ևս չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ
Կանխիկ վճարելի են

ԴԱԳԱՂԻ ՍԸ ԱՌՋԵՒ

Ոմանք պիտի կարծեն թէ՛ մեծատունի մը մահու դադարին վրայ մեր Եպիսկոպոսներէն ու վարդապետներէն մէկուն կոկորդալիը շուայլած գովասանքներէն հատուածներ մէջ պիտի բերենք :

Եթէ այդպէս ըլլար, անպատճառ դասակարգ մը, գլտորեւով քան թէ քաղաքով, և որ աւելի վատթարագոյնն է՝ բարեկամ ձեւանալու կեցիքը հազած, պիտի մտնեար ու ցած ձայնով աղանջէր վար հարցնէր . « Ի՞նչ առիթ . ինձի հարցուցին ի՞նչ ըսի որ 100 ֆրանկ տան . ու պիտի աւելցնէր . հայ օրս գրող մ'է ըսի, կանխիկ վճարելի ծախքերով բեռնաւորեալ . պէտք է իրեն օգնել ես յին . . . »

Բայց արդի պարագան, ի մեծ դժբաղդութիւն այդ կարգի ուրիշներու շահով ու վնասովը զբաղողներուն, բաւարար նիւթ չը պիտի մատակարարէ չազակատեւու . այլ պիտի առաջնորդէ զիրենք դադարի մը առջեւ, վերջուշերու համար այնպիսի հարցեր, որոնք որչափ խորհրդածութեան ու խօսակցութեան նիւթ դառնան, այնչափ աւելի պիտի նուազեցնեն թերեւ այն թերութիւնները, որոնք մեր տոհմային յատկանիշներն համարուած են, և զորս նշանակելու հարկին ներքեւ երբ կը գտնուի մէկը, չորցած տերեւներու խշուշուցին նման ձայն մը լսել կ'զգայ իր սրտի խորերէն :

Ասոնց կարգէն է ահա Հայոց Բարեգործական Ընկերութեան փակումը . — մահը — որ թէև իր անունին համապատասխան բարձր դիրք մը չ'ունէր վերջին քանի մը տարիներու մէջ, այսու ամենայնիւ յայտուտարաց ալ նուազ կարևոր տեղ մը դրուած չ'էր այն, և նոյն իսկ իր անցեալով պատուաբեր ալ էր կրնայ ըսուիլ :

« Ինչ որ կը ծնի, պիտի մեռնի » . բընութեան անյեղի օրէնքներէն մին է այս . բայց երբ մահը կանխահաս է, պէտք է անոր պատճառները փնտռել և գիտնալ թէ՛ մահը բնական ճամբաներով յառաջացած է թէ՛ մարդկային տկարամտութիւնը զայն փութացուցած է . . . :

Բարեգործականին մահը այս վերջին տեսակին կը պատկանի դժբաղդաբար, և պէտք է յետադարձ ակնարկ մը ուղղել, որչափ ալ հարեանցի ըլլայ այն, և ապա դայի համար փորձառական օրինակներ մը շակել :

Ասկէ մտաւորապէս 30 տարիներ առաջ, եգիպտոսի միջավայրին ընծայած դիւ-

րութիւններէն օգտուիլ գիացող և ընկերական համերաշխութեամբ գործելու առաւելութեանց յարգը ճանչցող անձինք հիմնադիրը եղած են « Հայոց բարեգործական ընկերութեան » : Ծարիներու այս շարքը կարծենք բաւական է ապացուցանելու համար թէ՛ հայերն ալ համերաշխութեան ոգևով գործել գիտեն, և բարեգործականի տեսականութիւնը՝ մեզի վերագրուած այդ արատը սրբադրած է մասամբ իւրիք :

Բայց ինչո՞ւ այս յանկարծական փոփոխումը և բարեգործականին մահը . Իրաւ կրնայ պատասխանուիլ այս հարցման :

Հանդուցեալը իր նոր կազմուած թրուականներուն մէջ և բաւական տարիներ ալ՝ ձեռներէց ոգևով օժտուած անձերու ակնին մէջ կը գտնուէր և այդ բնական պատճառ մը եղած էր իր շուրջ հաւաքելու գոհունակութեան արտայայտութիւններ, մինչդեռ վերջերս, զոր երկրորդ շրջան պիտի անուանենք, ամեն ինչ զոհուեցաւ կրքին առջեւ . ընկերութեանն ընտրովին անջատելով ինքիւրներ անոր կանանց սեղանին վերայ — պեղիկներ չհասկնանք — ծեծուեցան : Երբեմն այս ինչ կամ այն ինչ հացագործէն եղած գնումները անգամ օրինուոր չը դատուեցան և վարչութեան միտքը զրուզեցուցին օրերով : Ուրիշ ատեն մը՝ օրուան ամենակարևոր խնդիրներուն կարգը անցաւ « մեզէնները շատ սպառուած են թէ ոչ » : Մի ուրիշ ատեն ալ խորամանկին մէկը վարչութեան ամենատարած մէկ երկու անդամաց միջոցաւ ուղեց վրէժը լուծել պաշտօնեաներէ, որոնք իրեն գաղափարակիրը ըլլալու ցածութիւնը յանձն առած չ'էին :

Ու չ'ես գիտեր դեռ քանի՞ քանի՞ չընչին խնդիրներ ժամանակը սպառեցին վարչութեան անդամաց՝ խաղաղութիւնը վրդու վեցին, գժգոհութիւնները շտայան և լրջամիտ անձեր հասկցան թէ ի՞նչ աղտոտ խաղաղակներէ կ'անցնէին այդ ամենը, և մանաւանդ ինչ գժուծ միտքերէ կը բղխէին անոնք որ հիմնայատակ պիտի ընէին կարևոր հաստատութիւն մը, որը պատշաճ էր միշտ իր անունին համապատասխանող բարձրութեան մը վրայ կանգուն մնալ :

Ահա անոր վարկարեկ լինելուն և քան դուրսին պատճառներէն մէկ քանիները՝ երկու բառով :

Եւ հիմա՝ ինչպէս կը տեսնենք, երբ վարչութեան մը մէջ յուշումներ կը ուղարկին աթու մը գրաւելու, բնութեան օրէնքները կը շեղին, և մահը կանխահաս կուգայ իսկ « Բարեգործական ընկերու-

թեան » շունչը, իսկ անոր ախմար աւերիչները, անշուշտ անոր դադարին առջեւ ձեռնամած, կ'ողբան իրենց կորուսեալ փառքը . . . ապուշներ . . . :

ՔՈՆԵՐ

(Շարն . նախորդ թիւին եւ վերջ)
Աղամանդի մէկ փոքրիկ կտորը այնքան յարգելէ վերջ, մենք եւս աղամանդ ըլլալու չ'ենք միտքի երբէք :

Մարդիկ նախապաշարմանց եւ մոլեռանդութեան հակամարտութիւնով է որ փարած են, իրենց կրօնքին եւ ազգութեան :

Չ'կարուած ձմերուկին գոյնը որոշելու ատեն յաճախ կը սխալին մարդիկ :

Հարտութիւնը կը նմանի բեռի մը, որ իր տէրն է քեռնակիրը :

Մարդ բարի ընկեր մ'ունի, որ կը յորդորէ զինք միշտ դէպի լուսն ու բարին եւ այս խիղճն է . երանի անոր որ կ'ունի զիջող զայն :

Այրն . վեհութեան՝ կրնն համարուիլեան . այրն մարդկութեան՝ կրնն գթութեան երկն չ'ունին հակումներ՝ անբաններ են եւ ոչ այլ ինչ :

Երկարատեւ ձախորդութիւնը՝ բթամիտ կ'ընէ գժարդ :

Առիթը մի՛ փակցնէր, զուր տեղը մի՛ փնտռեր :

Իգական սեռին ճշմարիտ սէրը, կուսական անփորձութեան մէջ կը գտնուի միայն, իսկ անկէջ վերջ, ճշմարիտ սէր չ'ունի անիկա, այլ միայն փառքի եւ գրամի ետեւէն կը վազէ :

Երբ յօրինած ո եւ է ծրագրիրիս կը տեսնենք որ թերութիւններ ունի, փոխանակ միայն այդ թերութիւնները ուղղելու, ամբողջութեամբ կը ջնջենք զայն, ու նոր մը յօրինելու կը ձեռնարկենք, կարծելով որ այս անգամ անթերի գործ մը պիտի արտադրենք :

Մարդոց վիճակը օրուայ կը նմանի, որ թէ գիշեր ունի, եւ թէ ցերեկ, բայց ոմանց գիշերը, ամառուայ կարճ գիշերներուն կը նմանի, իսկ այլոցը ձմեռուայ ձանձարէի գիշերներուն :

Կիրն՝ կամ չափազանց կը պատուենք կամ կը նախատենք :

Տեսակցութիւնը կամ խօսակցութիւնը՝ մարդիկ իբրեւ ժամանց կը նկատեն ու չ'գիտեն թէ քանի՞ աղէտից պատճառ կ'ըլլան եւ միայն գամայն քանի՞ մեղք կը գործեն, անհաշիւ խօսքերով :

Աւելի վախնալու է այն կանանցմէ, որոնք ամուսնացած, բայց մայր չ'են եղած, իսկ կոյսերն ամենէ անմեղներն են :

Կանանց մինչեւ մեր օրերը ունեցած բընական պատկանելի զարդերն գեղեցկագոյնը՝ համեստութիւնը, իր վերջալոյսին հասած է : Այլ եւս հրապուրիչ ինչ ունի այս աշխարհը, հողերու ցուրտ գրկին մէջ ամփոփուած, ձերմակ եւ դեղին հանքերու, գեղարուեստով կոհուած կո՛յսալ . . . :

Արուեստականի եւ բնականի սարբերութիւնը, ուլունքի եւ աղամանդի տարբերութիւնըն է :

S. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«Արշալոյս» ի Տպարանէն ճաշակաւոր տպագրութեամբ լոյս տեսաւ, նորին Ս. Օժուրիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս Վեհափառ Հայրիկի երկասիրութիւնն «Վերջալոյսի Չայներ», որոյ մասին արդէն խօսած էինք ասկէ առաջ:

ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՎԱՌՆԱՑԷՆ

Պատ. Խմբագրութիւն «Արշալոյս» Լրագրի

Նախկին Հնչակեան Կուսակցութեան «Օրկան» ին վերջին թուին մէջ Պուրկազ բընտիկող կարգ մը պատուաւոր անձերու դէմ անխիղճ զրպարտութիւններ արձանագրուած էր: Մասնաւորապէս ալ իմ և գերդաստանի մասին սա ամենազտոտ կտորը յատկացուած էր: «Մակար Յովհաննէսեան (Զիարէթ գիւղից)»: Ընամանքով, ազգականով մասնիկներ են: Մշոյ դաշտին մէջ մինչև ցարգ ոչ մի մասնութիւն չ'է կատարուել առանց որ այդ ընտանիքի անդամները գիտցած ու թելադրած չ'լինէին: Տէնօրի դաշտինց իոյս տալով՝ այժմ ալ իւր պայեանական արհեստը Պուրկազի մէջ է շարունակուում:

Եթէ ինձի դէմ գտնուած ամբաստանութիւնը տարբեր նիւթի մը մասին ըլլար, երբէք կարեորութիւն չը պիտի տայի: Բայց այսպիսի ամենացած զրպարտութեան մը հանդէպ անկարելի ըլլալով լռել, հրապարակաւ կուզամ յիշեալ կուսակցութեան «օրկան» ղէն բացատրութիւն պահանջել:

Արդ՝ կը հարցնեմ, եթէ իրաւ է որ ես ու ընտանիքս 90 ական թուականէն սկսեալ ամեն տեսակ վատութեանց մէջ մաս ունեցած ենք ինպատ թուրքիոյ հայ ազգը դաւաճանելով:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ANCH' IO SON UOMO

(ԵՍ ԱԼ ՄԱՐԴԻ ԵՄ) (8)

Գ.

Օրէնքը հաստատուած է մանաւանդ ի նըպատակ անարարութիւն, ընդդէմ հզօրագունի, մինչդեռ՝ արդի դրութեամբ՝ փաստաբանը, անորակելի զեղծարարութեամբ մը, զօրավիգ կ'ըլլայ բիրտ ուժին եւ կը քաջալերէ մեղապարտութիւնը: Ոչ միայն այս, այլ նաեւ ինք կ'ըլլայ յանցապարտ, ու զեղծ շահագործել զազանիք մը կամ գաղանիքներ, որոնք վտանգուած էին իր պայտօնին:

Անշուշտ այս պատուարժան դատակարգն ալ ունի իր մէջ յարգելի անձնաւորութիւններ, խղճամիտ ներկայացուցիչներ: Բայց ո՞րքան անհշտ է անոնց թիւը բաղադրմամբ դատաւիճակներու ստուար թուոյն հետ...:

Երբ չարագործները վտանգ ըլլան թէ ո՛չ իրենց զերթը եւ ո՛չ իրենց զբամը կարող չ'պիտի ըլլան որ եւ և ազդեցութիւն մ'ունենալ փաստաբաններու վրայ, այն ատեն գատուորներու, բարապաններու, ոստիկաններու թիւէն զգալի զեղջի մը ժամանակը եկած պիտի ըլլայ...:

Ղուկաս էֆէնտին մին էր այն փաստաբաններէն, որոնք գաւառներու մէջ կը ծնին, կը զարգանան, կը գործեն եւ կը մեռնին առանց իրենց գիւղէն կամ քաղաքէն դուրս ելած ըլլալու: Իրաւագիտական դպրոցին անունը միայն

1. Մշոյ մէջ յիւր կազմակերպութիւն մը կար իւր մօտ 5000 հետեւողներով, որոնք էին այդ կազմակերպութեանը զեկավարները, որ այդ ատեն ո՛ր է կուսակցութիւն մտն չ'էր գտած հսն:

2. 90 թուականի սկիզբները Կովկասի մայր պիւոսն լսելով թէ մշոյ մէջ այսպիսի յիւր կազմակերպութիւն մը կ'առաջ Մեխակ ու յետոյ Բարսաւեան Արշակ անուն անձերը զրկեց փափաք յայտնելով անոնց հետ միանալու: Այդ միջոցին ատենք որոնց հետ իրենց բանակցութիւնները շարունակեցին:

3. Երբ Մշոյ Կովկէն բանակցութեանց վերջ մը տալու համար իր մէջէն երեք պատգամաւորներ որոշեց զրկել Կովկաս: Նոյն միջոցին Պ. Միհրան Տամատեան «Հնչակ» կուսակցութեան կողմէ ներկայացուցիչ եկաւ, և Կովկէն անոր վրայ վտահոթութիւն ունենալուն՝ յետաձգեց պատգամաւորութիւնը: Արմենք էին այդ պատգամաւորները: Պ. Տամատի խղճին կը թողում լուսաբանել:

4. Եթէ վատորէն ազգութիւնս կը դաւաճանէի, ինչո՞ւ ուրեմն կառավարութիւնը իւր հաւատարմը 15 տարուայ բերդարգելութեան դատապարտելով պարտեց յԱրիւս:

5. Եթէ «Հնչակ» կուսակցութիւնը դաւաճան ըլլալու գիտէր 90ական թուականներէն, երբ 95 ին աղատուելով Պօլիս ելայ ու Պուլկարիս անցայ, ինչո՞ւ իրենց ժողովներու ու մասնաճիւղերու մէջ ընդգրկելով միջոցներ ձեռք առաւ զիս Մուշ մացնելու իրակ գործիչ: 25՝ որ մինչև Կարսի սահմանը ալ պացի ուսումնասիրելու: Եթէ իրօք վատ էի, ինչո՞ւ այդ ծանր ու պատասխանատու սուրբ գործը կը յանձնէին. ու փոխանակ յիւր դաշտին ցոյց տալու, ինչո՞ւ յարգալիք բնագոյնութիւններ կ'ընէին:

6. Եթէ իրօք ես ու ընտանիքս դաւաճաններ էինք. Արապոյ, Լեւոն, Մխոյ և այլն որոնք կառավարութեանն խտրու կը փրկուուէին, ինչպէ՞ս կը համարձակէին ամեն

լսած են. եւ իրենց պերճախօտութիւնը, կամ՝ աւելի ճիշտն ըսելով՝ իրենց խրթնաբանութիւնը իբրև վկայական կը պարզեն սովորաբար լուկաց եւ միամիտ ժողովուրդին շնորհած աչքերուն առջև: Ինչպէս վարժապետութիւնը քահանայութեան, նոյնպէս ալ դատաբանագործութիւնը մեր ակնարկած փաստաբանութեան ուսանողորդ տաղան ստիճանն է: Կօշկակալութիւնէ, պայտարութիւնէ, խոհարարութիւնէ յանկարծ փաստաբանութեան բարձրացողները պատկանելի թիւ մը կը կազմեն գաւառներու մէջ, Բայց չ'կարծուի թէ ողորմելի արարածներ են ատենք, բնածնին կտորող եւ պաշտպանածնին մեծցող: Սխալ է այդ կարծիքը, այս անձանց մէջ կը գտնուին տաղանդներ, որոնց մեծամասնութեան բան մը միայն կը պակսի. սկզբունք...: Անոնք կը դատավարին, կը պաշտպանեն, կը հարուածեն, կը շահին, կը կորսնցնեն ո՛չ թէ յանուն խղճի եւ արդարութեան այլ վճարող գոհացնելու համար: Թերեւս հոս կարելի է միութեան գիծ մը քաշել վկայելու եւ արտօնելով փաստաբաններու մէջ...:

Միայն դաւաճային փաստաբաններու պատմութիւնը կը բուէ՞ ի պահանջել հարկին՝ անազատ լոյսով ողողելու գոտարաններու խորամէջերը: Ասանկ փաստաբանին, անանկ դատաւոր եւ փոխադարձաբար...:

Յարգելի է ամեն դիտութիւն, եւ չկայ անարդ արհեստ. վանդի մէն մի գիտութիւն եւ մէն մի արհեստ մարդկութեան բարբորութեան եւ զարգացման կը նպաստեն: Բայց ինչպէս որ մարդ կը թերահաւատի բժիշկի մը կօշիկ կարելու կարողութեան վրայ, նոյնպէս կը նախադաւէ իր դատը յանձնել փաստաբանի մը՝ որ գէթ

ժամանակ իմ տունս յանձնել: 2օք Մարտիանի հերոսին կը թողում հրապարակաւ յայտարարելու իմ ու ընտանիքիս մասին իր գիտցածները:

Այսօր մաս մը ազատներու կողմէ յիւր Օրկանի մը ձեռքով կ'անուանարկուի անոր խաչագողութիւնները ձաղկած ըլլալու համար: Զարմանալի է որ «Հնչակ» յիւր յայդ աները գիտնալով հանդերձ ձայնակից կը գտնուի այդ ինկածներուն ու չի ուզեր իր կողմէն Մուշ զրկուած գործիչներուն ժամանակին տուած տեղեկագրիները գտնէ անգամ մը աչքէ անցունել, խնդրին երազէկ ըլլալ, ու յետոյ այդ տեսակ աղտոտ գրութիւն մը հրապարակ հանել:

7. Պուրկազի մէջ երբ կամ ո՞ր ժամանակ թուրք հրապատարակեց զայցեր եմ. և կամ տեղական կառավարչատնի միջոցաւ կարգ մը անձանց հեռացում պահանջեր եմ: Ես պատրաստ եմ ու կը պահանջեմ որ «Հնչակեան կեդրոն» ալ իւր կողմէն երկու մարդ ցոյց տայ, որպէսզի խնդիրը լուսաբանենք:

Եթէ սոյն հարցմանս չ'պատասխանուի, պիտի հարկադրուիմ տեղական թերթերու միջոցաւ մանրամասնօրէն այդ վատերի ամբողջ անց ու դարձը պարզել՝ վճիռը հայ ժողովրդեան ձգելով: Ամօթ է, ինչպիսիք կուսակցական «Օրկան» անուանող թերթի մը այդ ստիճան յայտնի լրբութիւն չի վայելեր: Որքան վարերը պիտի գլտորի, երբ չ'կրնայ իր ըսածները հաստատել, ու ժողովուրդը իրաւամբ չ'պիտի թքնէ իր երեսին:

Մէկ մէկ օրինակ ալ «Շարժում» ի «Իրաւունք» ի «Հայրիկ» ի «Հայրենիք» ի «Հնչակի զրկած ենք ի հրատարակութիւն:

ՄԱԿԱՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԵՆՏՆՆՈՅ ԼԵՏ

—*—

Ոսկեհեւ վարսերու յուզումներուն մէջ կը մրափէի վերացած... ու հօգիս կը ձգտէր անմասնութեան ովկէանները... ուր մինակդ՝ հոգեհմայ շուշանի մը պէս... քաշուած տաղտուկ-

ինքն իր գրածը կրնայ կարգաւ, քան այնպիսի մէկու մը՝ որ պողպատեղծութեամբ կ'զբաղէր երկու օր առաջ:

Թերեւս այս էր պատճառ որ Ղուկաս էֆէնտին՝ անդեակ ըլլալով մի քանի լեզուներու, գերթէ անաշխակագրութիւն սաացած էր Ս. Ի թուրք եւ քրիստոնեայ փաստաբաններու վրայ: Հանդամանք մ'ալ որ նուազ նպատաւոր յանձնարարական չ'էր իրեն համար սա էր թէ տեղւոյն հայ շոջապետին՝ Արգոտ արդոյնին անհրձագըն էր: Արդ երբ իշխանցուն աննկատացաւ, թէ՛ ժողովուրդը եւ թէ՛ կառավարական պաշտօնեաները վստահաբար կը խորհէին որ փաստաբանը բոլորովին օտար չ'էր այդ փախուստին պարագաներուն: Բայց, ինչպէս զիտեմք, անհիմն էր այդ կարծիքը: Ատոր ապացոյցն ալ սա էր թէ Ղուկաս էֆէնտին բանտէն ելնելէն ետքը անմիջապէս քրոջը քով փութացեր եւ անդեկութիւն փնտեր էր, բայց ի զուր: Տիկին Արգոտ ազա միավանկերով միայն պատասխանած էր:

Ամիս մը ետքը կրկին գիմեց:

—Ի՞նչ ըսել է, գոչեց վերջապէս Ղուկաս էֆէնտի, ինձ մէ ալ կը պահես:

—Այո՛:

—Ինձմէ՞, քու նղորմէ՞դ...

—Այո՛, իմ նղորմէս:

—Ինչպիսիք, վարդուհի:

—Չ'խնդրեցայ, Ղուկաս, կ'աղաչեմ զիս հանգարաւ ձգէ՛:

—Բայց քու անվստահութիւնդ զիս անարգել է:

—Վարդուհի չ'պատասխանեց:

(Շարունակելի) Ա. ՊԱՆԱՆ

հերու աշխարհէն... լուսաշող պղպուճներով
կ'օրօրէիք սէրս... ու մելամաղձօս երազներս
սխուր... որք անուրջի ձեւերով համակած էին
էութիւնս...

Վարդագոյն ժպտանքուդ հեղեղին մէջ հը-
մայուած էի... երբ զգացի համբոյրներուդ հը-
պուճը քաղցրիկ... որք կենսատու զեփեռին
հետ համակ... կուգային զգուշ զիս... համ-
բոյրներ ալրող... տոչորող... Ու պահ մը հոռ-
կէ, անծայր զգուշներուդ մէջէն անուշիկ...
զիտեցի երկնագոյն աչքերդ... ուրկէ՛ սիրոյդ
կայծերը տարտամ... կը հրահրէին ներշնչում-
ներուս կրակը...

Յափրացած էթերին յերեւոյնքներէն...
վայրկեան մը սևառայ գեղափայլ դէմքիդ մութ
կառոյցները... որք տարտամ ստուպներու պէս
սատամսոտ... կը խորատուգէին սրտիդ խորը...
պրպակով զգացումներուս մէջէն սէր մը ան-
հուն... սէր մը անմոռանալի... ու կը թաւա-
լէին զիս հոն... թրթռուն հուրիներու... աշ-
խարհը...

Անմեղ իդձերուս հեշտարոյր թախտերուն
մէջ կը խոհայի... երբ առջոյն ստուէրներ մա-
հաչուկ... եկան սքողել ինձի հրատարիչ պե-
ղզը... խելով կայծ մը կեանքէս... հոգիէս :
կամայ կամայ թաղծալի սեւ մը պատեց ճակ-
վայ... ու արամալից կաթիլներ շուա շուա
սահեցան աչքերէն... կաթիլներ անուշ... սը
ամփոփուած էին վաղանցուկ երջանկով կանա-
տաւոր բեկորները... անողոր ճակատապիտ
ալպպէս վճռած էր արտոս... :

ԱՐՏԱՇԵՍ ՄՍՐԼԵՍՆ

ՏՐԱՊ . Ա . Յ . ԲԻՐԵՍՈՒՅԵԱՆ

Իր գլխիքը Շարա գլօտ-Պէյէ փոխադ-
րած լինելով ի Տահէր, Շարա Պիրքէթ-էլ-
Բաթըլ, ֆրէշներու վարժարանին գիմաց,
կը ծանուցանէ իր արգոյ յաճախորդաց սը
յեա ալսու իր խնամոց պէտք ունեցողնե-
րը հաճին զիմել վերալիշեալ տեղն ուր կը
գտնուի կէս օրէ առաջ ժամը 9-11 և կէս
օրէ յետոյ 3-5 :

ՈՐԲԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ընկերութեանս Գործ . Ժողովը այն
անդարարութեամբ կուգայ ստիպողաբար
խնդրել Գահիրէի և շրջակայից այն Պատ .
ազգայիններէն որոնց ընկերութեանս կողմէ
զրկուած են «Լուսինեանք» գրքոյկներէն,
ինչպէս նաև Գեր . Ս . Առաջնորդի լու-
սանկարներ, որ հաճին անոնց փոխարժէքը
և կամ՝ հսկառակ արտագային՝ յիշեալ գիրք
կամ լուսանկարը անյապաղ վերագործնել
մեզ, Ընկերութեանս գանձապետի հետեւ-
եալ հասցեով :

GARABED ERZENGATZIAN
Rue Abdul-Aziz
Caire

Ինչպէս արդէն ծանուցուած է, «Լու-
սինեանք» ի հասոյթէն գոյացած գումարը
զրկուած է ու նոր գանձուածները նոյնպէս
պիտի զրկուի Արաբիկի ընդհանուր սրբե-
րուն, որոնց եզկելի կացութիւնը անձանթ
բան մ'ըլլալու չ'է ասին զգայուն ազգա-
յիններու :

Գործ . Վարչութիւն
Վ . Ասենազպրի Ատենասպետ
Ս . ՕՏԱՊԱՇԵԱՆ Ա . Մ . ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—Թուրքիա 193,000 ժամ . լիրայ վճա-
րած է Ռուսիոյ, ի հաշիւ Ռուսիոյ հպատա-
կաց պատերազմի ժամանակ կրած վնասնե-
րուն, և Ռուսո-թուրք պատերազմի տու-
գանաց յետնեալ գումարին :

—Կրասոքէն (հարաւ-ափրիկէ) ստաց-
ուած պաշտօնական հեռագրի մը համաձայն
Ուսթէրքլօֆի հեծեալ զինուորներէն 10
մեռեալ, 4 վիրաւորեալ և 66 գերիներ կան :
Միայն մէկ Պօէր մեռած և մէկ հատ ալ
վիրաւորուած կայ, որ անգղիացի վիրաւոր-
եալներուն հետ փոխադրուած է :

—Օհաննէսպուրկէն 21 Յունիս թուա-
կանաւ կը հեռագրեն Տէյրի-Մէյրին :

Զօրավար տը Ուէթ Թրանսվալի արև-
մտեան կողմերը կը գտնուի, զօրավար Տը-
լարէյ ընդհուպ զօրավար Պօթային պիտի
միանայ, որը Ամէրսֆօրթ (Թրանսվալի ա-
րևելակողմը) կը գտնուի :

Շատ մը թերթեր Բրէթորիայէն ստաց-
ուած հեռագրի մը կը հրատարակեն, յայտ-
նելով որ զօրավար Լուի-Պօթա անգղիական
խումբերու առջև կ'ընկնի, և մանաւանդ եր-
կու անգղիացի հրամանատարներ իրենց ի-
րարու միացման շարժումը յառաջ կը տա-
նին :

—Մօրէիկի Լիքս՝ Հարաւ Ափրիկէ այցե-
լող ամերիկացի հարուստ և զարգացած սեփ-
մը նամակը կը հրատարակէ, որով նա կը
յայտարարէ թէ՛ ներկայ պատերազմէն պի-
տի հետեւի սեբրու և ճերմակներու մէջ ան-
վերջանալի շարժում մը :

Նամակագիրը կ'ըսէ թէ հարաւ ափրի-
կէի սեբրը շատ աւելի Պօէրներէն կը վախ-
նային քան թէ անգղիացիներէն . հետեւա-
բար Պօէրներուն յաղթահարիլը նշան մը
պիտի ըլլայ անոնց համար փոքրաթիւ ճեր-
մակներուն դէմ ընդվզելու :

—Կ . Պօլսէն Յունիս մէկ թուականաւ կը
հեռագրեն թէ՛ Ալպանիացիները կրէսինճէի
մէջ եօթը քրիստոնեաներ սպաննած են :
Ինչպէս կ'երևի՝ ալպանական խռովութիւն-
ները հետզհետէ ահագին համեմատութիւն-
ներ կ'առնեն :

—«Մշակ» ի մէջ հետեւեալը կը գտնենք :
Մի քանի օր առաջ Սամսոնի մօտերից
երեք հայեր առագաստանաւ նստում են
Ռուսաստան գալու համար, յոյնի մը ընկե-
րակցութեամբ :

Ճանապարհին թուրքերը երեք հայերն
ալ ծով են ձգում :

Յոյնը թէ և տեսնում է բայց լռում է,
սակայն Սեւաստափոլ հասնելով իսկոյն ու-
տիկանութեան յայտնում է խնդիրը :

Ոստիկանութիւնը խիստ միջոցներ է
ձեռք առել և ձերբակալել է բոլոր նաւաս-
տիները :

—Յովհաննէս խան Մասէհեան որ այն-
քան յաջողութեամբ թարգմանած է Շէքս-
բիլի թատերգութիւնները, Ա որ Պարսից
արտաքին գործոց նախարարութեան ամե-
նէն կարեւոր պաշտօնականներէն մին էր ու
երկու տարիէ ի վեր թէ՛հրամանի քաղաքական
գիտութեանց համալսարանին մէջ միջազ-
գային իրաւագիտութեան դասախօսութիւն-
ներ կը կատարէր, այս անգամ Պէրլինի
պարսկական պետականաւան աւագ խորհրդա-
կան ընտրուած ըլլալով իր պաշտօնատեղին
մեկնել է :

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Լանդա 1 Յունիս . —Զօր յանքեր ե-
զան երկրին բոլոր կողմերը ի նպատակ Պօէր-
ներուն միթիւններ կազմակերպելու համար .
կատաղութեան տեսարաններ տեղի ունե-
ցան Լիտի մէջ, ուր բացթեւայ տեղեր մի-
թիւններ կազմակերպելու ձեռնարկներ ե-
զան . ստենախօսները ինքզինքնին լսելի ը-
նելու չ'յաջողեցան և ի վերջոյ ոստիկաննե-
րու ուղեկցութեամբ անոնց քով առաջնոր-
դուեցան, մինչդեռ սպանալից ամբոխ մը
կը հետեւէր իրենց :

Նիւ-Նօրք 1 Յունիս . —Շարաթ օրը չա-
փազանց տաքութենէն 17 հոգիներ շոգա-
հար մեռան :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Ն . Բ . Խաթիվը առաջի օրը Մանրուա
զբօսանաւով մեկնեցաւ դէպի Ուււլա, ուր
հեղինական կառավարութեան կողմէ հաս-
տատուած քառանկեակը (քարանթինա) պի-
տի լնննէ, յորմէ յետոյ Պիրէոն նաւարկե-
լով անտի Զուիցերիա պիտի մեկնի : Իսկ
Մանրուա՝ Բարձր Խաթիվուհին և իր ընտա-
նիքը Կ . Պօլիս պիտի փոխադրէ :

—Աղէքսանդրիոյ մէջ ի մօտոյ յիմար-
ներու յատուկ նոր հիւանդանոց մը պիտի
կառուցուի . այս մասին հանրային շինու-
թեանց նախարարին հետ տեղի ունեցած
բանակցութիւնները վերջ գտած են :

—Ժանտախտի նոր դէպք մը տեղի ու-
նեցած է ի Զակապիկ վերջին 24 ժամուան
մէջ :

—Աղէքսանդրիոյ կառավարութիւնը ե-
րեկ առաւօտ հեռադրած է ներքին գործոց
նախարարութեան թէ՛ Բօր-Սայիտէն ստա-
ցած է հեռագիր մը ք որով կ'իմանայ թէ
Լէօն Ֆէհմի Մարսէլ մեկնած է :

—Գալտեան վարժարանի աշակերտաց
ծնողներուն կողմէ Պատ . Բարզք . Ժողովին
մատուցուած 48 ստորագրութեամբ հանրա-
գրին օրինակը թերթիս խմբագրութեան
զրկելով անոր հրատարակութիւնը խնդրած
են, որ առաջիկայ թուով տեղի պիտի ու-
նենայ :

ՀԱՅԱԿԱՆ ՍՐՃԱՐԱՆ

«ԿՈՍՆ ՔԱՅԷ ՇԻՇԱ»

Եզպէթիյէ, Սրբնախտ պատի դէմ, Տիտր
Գոտնիկ Սիրունեանի սեփականութիւնը եղող
սոյն հաստատութիւն՝ որ Գահիրէի ամենէն գե-
ղատեսիլ եւ ամենէն օգտուն գիրքը կը գրուէ,
ոչ միայն միջազգային այլ նոյն իսկ հայկական
ժամագրավայր մը հանդիսացած է :

Սպասարկութեան մասին ցոյց արուած փոյ-
թըն, ըմպելեաց մաքրութեան համար տարուած
խնամքն ու գինիերու չափաւորութիւնը ուրիշ
ո՛չ մէկ տեղ կարելի է տեսնել : Հոն՝ ամեն ճա-
շակ իր գոհացումը կրնայ գտնել :

Օտար լեզուաւ լրագրաց հետ կը գտնուին
հայերէն ամեն թերթերը :

ԿՈՍՆ ՔԱՅԷ ՇԻՇԱ հասցեով եկած նամակ-
ներն եւ աւանդներն անմիջապէս կը յանձնուին
իրենց տէրերուն :

Վերջապէս միայն մէկ անգամ այցելողը
կ'ընտրէ սոյն Սրճարանը ընել իր ամենօրեայ
յաճախավայրը :

ԿՈՍՆ ՔԱՅԷ ՇԻՇԱ
Եզպէթիյէ, Սրբնախտ պատի դէմ

ԳՐԱԸԱՐԻ ՊԷՏԲԸ ԿԱՅ

Ուշը են մեր գործ փնտռող և չ'կայ ըսողները :

Երկու վարձ գրաչարի պէտքը կայ . մէկը « Արշալոյս » ի , և միւսը Հրատարակչական Ընկերութեան » համար . ամսական 80-120 ֆր . գիմել « Արշալոյս » ի Խմբագրատունը :

Ուսանող գրաչարներ ալ կ'ընդունուին :

ԱԶԴ

ԱՐՇԱԼՈՅՍԻ Տպարանէն լոյս տեսած է ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ զիրքը՝ որը տարիներէ ի վեր սպառած էր :

Այս ութ ու կէս երկսիննակ մեծադիր ֆորմայով զիրքը Գահիրէի Հայոց Հրատարակչական Ընկերութեան երախայրիքն է : Գինն է ԵՐԵՔ ՅՐԱՆՔ :

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Ն Ո Ր Բ Ս Ո Ւ Ա Գ Ի Բ Բ
Պ Ա Տ Կ Ե Ր Ա Չ Ա Ր Գ
Ս Ր Ա Ն Ս Ա Հ Ա Յ
Փ Ա Ր Ի Չ 1901

Սոյն ընդարձակ Բառգիրքը, որուն Ա. աւջին Հատարը 1061 մեծադիր երեսներէ բաղկացած և բազմաթիւ պատկերներով զարդարուած հրապարակ ելած է և կը պարունակէ A-H գիրերը, կը վաճառուի ի Գահիրէ . գիմել ի Պէյն-էլ-Սուրէն Հայոց Եկեղեցին :

ՕՐ . ԲՐԻՍՏԻՆԷ ԳԱԶԱԶԵԱՆԻ

ՍԹԱՌ ԼԱՅՖ

ԼՈՆՏՈՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնեալ 1843

Բացարձակ ապահովութիւն . — Չափաւոր ապահովագրի . — Ապահովագրի հումթեան համաձայն շահու առուելութիւն . — Իրաւանց պահպանութիւն՝ ապահովագրի վրձարմանց յապաղումի պահուն . — Չախող պարագաներու մէջ անմիջական հաշուեյարգարութիւն . — Ետեւ բաժանում ամեն Հինգ ՏԱՐԻՆ մէկ անգամ :

Ս . ԼԻՅՆԱՐ

Ընդհանուր ներկայացուցիչ Եգիպտոսի

ՀՆԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 30 ՅՈՒՆԻՍ 1901

2413	3362	5411	7669	8166	456
757	885	1515	1918	2147	3514
3773	3923	4100	4398	4776	5142
5207	5248	5530	6702	6718	6733
6915	7295	8611			

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԻ
ԿԻՐԱԿԻ 30 ՅՈՒՆԻՍ 1901

1871	9617	7910	228	371	1219
1432	1840	2787	3007	3503	4086
4228	4833	5166	5643	6168	6232
6242	6337	6403	7661	7666	7668
7924	8132	8336	8745	9488	9730

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե . ԹՈՐՈՍԵԱՆԻ

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ԻՐԱԿ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալարի փողոց . Խաղնէտալի սեփականութիւն , Պրիսթլ Օլիէլի ճիշդ գիմայ , Գաֆէ Տր Լա Պուրսի կից :

Հին ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՆՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6530 ՄՍՍՆԱՃԻԳԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներն են և ամենցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :

400 է աւելի վկայականներով և մէտայլներով վարձատրուած , Երաշխաւորեալ մեքենաներ ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական ստուստանանդիսին մէջ ստացած է .

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ


ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ԱՐՔՈՒՆԻՔԻՆ

ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՅ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԽՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ , ուշագրութիւն գարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ ի յանձնաւորին :



Ձրի դասեր և նորագութիւններ , ՍԻՆԿԵՐ մեքենայից համար , յաճախորդաց տուններուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւն հին մեքենայից և նորագութիւն ամեն կարգի մեքենայից

Գին ՉԱՓԱՒՈՐ

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՐԵԱԼ ԳՐԱՄԱԳՆՈՒՆ 1 ՄԻԼԵՐ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները : Ապահովագրեալներուն արգէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ սրէ է ընկերութեան մէկ միլիար աւելի է :

ԳԷՈՐԳ ԵԿԱՒՕՑ ներկա . յայտուցիչ ի Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ , ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակատար յԱզեքսանդրիա :

ԿՕՇԿԱԿԱՐ

Գ . ԵՒ Ց . ՊԷՇԻՐԵԱՆ ԵՂԱՐԱՐՔ

Պագար-Մուրուր թիւ 39

Կ'ուզէ՞ք սննեալ հմուտ վարպետի ձեռքէ ելած , ֆրանսական նորաձեւութեանց համապատասխանող , սոքերը կոշտերու ցաւերէն ազատ պահող և գիմայկուն կոշիկներ :

Գիմեցէ՞ք ի Պաղար-Մուրուր թիւ 39 խանութին մէջ հաստատուած Պէշիրեան եղբարց , որոնց գործածած ապրանքներու տուկունութիւնն և ձեւերու մասին սենեցած հոգածութիւնը ամեն տարակոյսէ վեր է :

Պէշիրեան եղբարք իրենց յաճախորդաց ըրած յանձնարարութիւնները փութով և մեծ խնամով կը պատրաստեն :

Բաւ է միայն մէկ անգամ գիմել իրենց . ապահովապէս մնալուն յաճախորդ պիտի լինիք :

ԲԱՐՈՒՏԻ ԸՆՏԻՐ ԱՅՈՒՆ

Ունէին՞ք մինչև ցարդ հայ մը որ գիտնար մտածել թէ՛ ամուսն ալ մեծաքանակ սպառում կ'ունենայ և կրնայ կարեւոր շահ արտադրել : Առեւտուրի այդ ասպարէզն ալ օտարնիրուն թողուած էր :

Տիար Յակոբ Վարդանեան (Սանտեսանի քեռորդի) այժմ ամենաընտիր ամուսնի վաճառականութեամբ կ'զբաղի և մըցում բացած է օտարներուն դէմ :

Գիմեցէ՞ք իր միջերանցը Սուգ-Խուսար թիւ 17 և 18 :

Անխարդախ կշիռ և չափաւոր գին :

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ — ՍԻՄՈՆ ՅԵԼԷԿԵԱՆԻ

ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ